ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. մարտի 7-ի թիվ 5/3

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերահսկման և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող՝ օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Ի. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2012թ. մարտի 7-ի թիվ 5/3 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերահսկման և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող՝ օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011թ. սեպտեմբերի 28-ի թիվ 25/3 և 2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/7 որոշումները:

Վերահսկողության նպատակը՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերահսկման և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԾԻԳ) կողմից իրականացվող՝ օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ ԾԻԳ-ի կողմից ծրագրերի իրականացմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգը:

Վերահսկողության օբյեկտները՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերահսկման և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկ և ծրագրերի իրականացմանն առնչվող այլ սուբյեկտներ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2011 թ. հոկտեմբերի 6-ից մինչև 2012 թ. մարտի 1-ը:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2008 թ. հունվարի 1-ից մինչև 2011թ.դեկտեմբերի 31-ը;

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը, ինչպես նաև՝ համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները:

Դիտարկման փուլում և ստուգման ընթացքում իրականացվել է ԾԻԳ-ից, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն: Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման/համեմատման մեթոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն, ինչպես նաև՝ շինարարական աշխատանքների հսկիչ-չափագրման աշխատանքներ:

Վերլուծության փուլում ամփոփվել, վերլուծվել են դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

<u>Վերահսկողության ծավալը՝</u>

Վերահսկողությամբ ընդգրկվել է «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիրը: Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանում կատարվել է 10,400.53 մլն դրամի փաստացի վճարում, որից վերահսկողություն իրականացվել է 5,339.03 մլն դրամի նկատմամբ:

<u>Վերահսկողության արդյունքները՝</u>

1. **<u>«Շինարարական աշխատանքներ»</u>**

Ընտրանքային կարգով ստուգվել է թվով 20 օբյեկտ, ստուգված գումարը կազմել է 971,069.5 հազ. դրամ: ***Ստուգման արդյունքում արձանագրվել է 104,914.9 հազ. դրամի խախտում,*** որից՝

- ծավալային հավելագրում՝ 53,725.2 հազ. դրամ,
- անորակ աշխատանքներ՝ 51,189.7 հազ. դրամ:

Ընտրանքային կարգով ստուգված օբյեկտների գերակշիռ մասում բազմիցս կրկնվում են հետևյալ բնութագրական խախտումները.

- նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում բացակայում է շինարարության կազմակերպման նախագիծը,
- կոնստրուկտորական գծագրերը կատարվել են թերի՝ բացակայում են կտրվածքները, հանգույցների մանրամասները և այլն,
- խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 29-ի թիվ 273-Ն «Ռնակելի և հասարակական նշանակության շենքերի, շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ» հրամանի պահանջները,
- նախագծանախահաշվային փաստաթղթերի նախահաշվային մասերը փորձաքննություն չեն անցել,

- խախտվել են «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 96 որոշման պահանջները,
- խախտելով սահմանված կարգը՝ թերի կազմով փորձաքննություն անցած և դրական փորձագիտական եզրակացություն ստացած որոշ օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայնեցվել են պատկան մարմինների կողմից,
- շինարարության նորմերի ընդունման մասով թերի և սահմանված կարգի խախտումներով են լրացվել շինարարության վարման մատյաններն ու ծածկված աշխատանքների ակտերը:

Շինարարական աշխատանքները հիմնականում իրականացվել են ներքոնշյալ խախտումներով.

- հենասյուների հիմքերը բետոնացվել են առանց կաղապարամածի,
- խողովակաշարերի վրա չեն տեղադրվել նախագծով պահանջվող պողպատե ձևավոր մասերը (մետաղական խողովակի փոխվող տրամագծի անցումներ, եռաբաշխիչ մասեր),
- հենասյուները և խողովակաշարերը ներկված են անորակ,
- հենասյուների վրա տեղադրվող կիսախողովակի և գազատարի միջև պարանիտե միջադիրները չեն տեղադրվել,
- շինարարական օբյեկտներում սահմանված կարգով պահանջվող տեխնիկական հսկողությունն իրականացվել է թերի, սահմանված կարգի խախտումներով,
- խախտվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» պահանջները,
- խախտվել են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «ը» կետի պահանջները՝ սահմանված կարգով պահանջվող հեղինակային հսկողություն օբյեկտներում չի իրականացվել,
- ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտերը հիմնականում կազմված են ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 626-Ն «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» որոշման պահանջների խախտումներով:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարբեր համայնքների գազաֆիկացման աշխատանքներ՝ ընդհանուր 66 ծրագիր: Բոլոր

ծրագրերով գազաֆիկացման աշխատանքներն ավարտված են, սակայն 2012թ. մարտի 1-ի դրությամբ ***գազաֆիկացումից օգտվում են ընդամենը 4211 տնտեսություն՝ նախատեսված 18237-ի փոխարեն, կամ ընդամենը 23.1%-ը:***

Նմանատիպ ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է վեր հանել նման ցածր ցուցանիշի պատճառները և ծրագրերի պլանավորման փուլում ճիշտ գնահատել հետագայում դրանցից օգտվելու (օգտագործման *արդյունավետությունը*) հնարավորությունները:

2. <u>«Ապրանքների ձեռքբերում»</u>

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է՝

- «Առվա Երկիր» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո ԾԻԳ-ին պետք է վերադարձներ 992մ 630մմ տրամաչափի խողովակ, որը չի վերադարձվել: Ըստ ձեռքբերման արժեքի, խողովակների արժեքը կազմում է 11,408.0 հազ. դրամ:
- ԾԻԳ-ի և 3 կազմակերպությունների («Արամիր» ՍՊԸ, «Արշանդ» ՍՊԸ, «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ) միջև կնքվել են պ/է խողովակների ձեռքբերման պայմանագրեր, որոնց հիման վրա մատակարարված խողովակները տրամադրվել են տարբեր կապալառուներին: Սակայն, ***խողովակների բաշխումը կատարվել է թերի. հիմնականում բացակայում են խողովակների հանձնման ակտերը:*** Մասնավորապես՝ 1062մ (2,841.9 հազ. դրամ գումարով) պ/է խողովակների տրամադրումը կապալառուներին ***ԾԻԳ-ի կողմից չի հիմնավորվում, թե ում են տրված և որտեղ են տեղադրված:***
- «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԾԻԳ-ին մատակարարվել է նաև 3720մ մետաղապլաստե խողովակ՝ 1,265.6 հազ. դրամ գումարով: ***ԾԻԳ-ում բացակայում է խողովակների բաշխումը***՝ պարզ չէ՝ ում են տրված և որտեղ են տեղադրված:
- ԾԻԳ-ի և «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2009թ.-ի ընթացքում կնքվել է 9 պայմանագիր՝ 56,342.2 հազ դրամ արժեքով: Նշված պայմանագրերի *շրջանակներում կրկնակի հաշվարկվել է ԱԱՀ՝ ընդհանուր* 1,437.5 հազ. դրամ արժեքով, ուշ մատակարարված ապրանքների համար պետք է կիրառվի ընդհանուր 366.6 հազ. դրամի տույժ: «ՀՀ Սյունիքի մարզի Կոռնիձոր համայնքի ջրամատակարարման նպատակով պոլիէթիլային խողովակների մատակարարում և մոնտաժ» աշխատանքների պայմանագրի մասով կապալառուի ընտրություն չի անցկացվել (այդ մասով ԾԻԳ-ում փաստաթուղթ առկա չէ):
- ՀՀ Շիրակի մարզի մի շարք համայնքների գազաֆիկացման աշխատանքների համար հայտարարված երեք մրցույթներին ամենացածր գնառաջարկը

ներկայացրել է «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ն: Մրցութային հանձնաժողովը երկու պայմանագրերով հաղթող է ճանաչել «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ին: Երրորդ պայմանագրի դեպքում, հաշվի առնելով «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ի գրությունը, ըստ որի՝կազմակերպությունը հրաժարվում է մրցույթից (շինաշխատանքները ժամանակին ավարտելու անհնարինության պատճառով), մրցութային հանձնաժողովը առաջարկել է այդ մրցույթի համար հաղթող ճանաչել հաջորդ հայտատուին՝ «Առվա-երկիր» ՍՊԸ-ին:

Հայտատուի կողմից մրցութային առաջարկից հրաժարվելու պարագայում ԾԻԳ-ի կողմից չի պահվել մրցութային առաջարկի բանկային երաշխիքը 1,000.0 հազ. դրամի չափով:

- Թվով 2 պայմանագրերով «Արտինժեներինգ» ՍՊԸ-ին տրամադրվել է 200մմ տրամաչափի 12990մ պ/է խողովակ, աշխատանքների ընթացքում տեղադրվել է 12890մ-ը: ***Տարբերությունը՝ 100մ, չի վերադարձվել ԾԻԳ-ին,*** որի արժեքը 1մ-ի համար կազմում է 10,380.0 դրամ ***(ընդամենը՝ 1,038.0 հազ. դրամ):***
- FMAP/LCB/CW/-2009/017 պայմանագրի շրջանակներում «Արտինժեներինգ» ՍՊԸ-ին տրամադրվել է 200մմ տրամաչափի պ/է խողովակ, որից 65մ-ը նախատեսվել է խողովակների վթարային պահեստավորման համար: Սակայն, կատարողական ակտով կապալառուն ներկայացրել է 65մ գնված խողովակ, որի համար լրացուցիչ վճարվել է 1,220.7 հազ. դրամ՝ 1մ-ի համար 18,780.0 դրամ՝ այն դեպքում, երբ ԾԻԳ-ին մատակարարվող խողովակների 1մ-ի գինը 10,380.0 դրամ է: ***Անհայտ է խողովակների գտնվելու վայրը:***
- FMAP/LCB/CW/-2009/019 պայմանագրով նույնպես նախահաշվով նախատեսվել է 60մ (200մմ տրամաչափի) և 36մ (160մմ տրամաչափի), խողովակների վթարային պահեստավորում, խողովակները ԾԻԳ-ի կողմից «Արտինժեներինգ» ՍՊԸ-ին տրամադրվել են զրոյական արժեքով: ***Անհայտ է խողովակների գտնվելու վայրը՝ 856.8 հազ. դրամ արժեքով:***

ԾԻԳ-ի և «Տրանսգազշին» ՍՊԸ-ի միջև կնքվել են 2 պայմանագրեր՝ 163,348.7 հազ. դրամ գումարով (ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի, Փոքր Սեպասար, Մեծ Սեպասար և Կրասար համայնքների գազաֆիկացում):

- Աշոցք համայնքի գազաֆիկացման աշխատանքների պայմանագրի մասով առկա են տարբերություններ՝ համայնքի կողմից տրամադրված և փաստացի կատարողական ակտերով տեղադրված խողովակների միջև: Նույն պայմանագրի շրջանակներում աշխատանքների ուշ կատարման համար կապալառուից պետք է պահվեր 590.1 հազ. դրամ գումարով տույժ:

- Փոքր Սեպասար, Մեծ Սեպասար և Կրասար համայնքների գազաֆիկացման աշխատանքների պայմանագրի մասով, համայնքները տրամադրել են գազաֆիկացման համար անհրաժեշտ հենասյուները (ոչ ստանդարտ խողովակներից): Սակայն կապալառուն կատարողական ակտերով *ներկայացրել է նաև ոչ ստանդարտ խողովակների գնում՝ 931.3 հազ. դրամ գումարի չափով, ինչը վճարվել է ԾԻԳ-ի կողմից: Առկա են տարբերություններ համայնքի կողմից տրամադրված խողովակների և փաստացի կատարողական ակտերով տեղադրվածի միջև:* Կատարողական ակտով կապալառուն ներկայացրել է 165մմ տրամաչափի 63մ խողովակի ձեռքբերում՝ 371.7 հազ. դրամ գումարով, սակայն տեղադրել է ընդամենը 2մ-ը: *Կապալառուին ավել է վճարվել 359.9 հազ. դրամ:*
- «Պառեքս Գազ» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից *ԾԻԳ-ին չի վերադարձվել* 63մմ-անոց 432մ, 75մմ-անոց 320մ խողովակ՝ ընդհանուր 923.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով, չնայած որ աշխատանքներն արդեն ավարտված են:
- «Հովարմար» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից *ԾԻԳ-ին չի վերադարձվել* 200մմ տրամաչափի 52մ պ/է խողովակ՝ 539.76 հազ. դրամ արժեքով:

3. <u>«Ենթավարկեր»</u>

«Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման» և «Ծուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրերի շրջանակներում «Ենթավարկեր» կատեգորիայով աշխատանքներն իրականացվել են «Գյուղացիական Ֆինանսավորման Կառույց» ԾԻԳ ՊՀ-ի (*այսուհետ՝ ԳՖԿ*) *կողմից:*

Վերահսկվող ժամանակահատվածում ԳՖԿ-ին Մասնակից Ֆինանսական Կառույցների (այսուհետ՝ ՄՖԿ[1]) կողմից ներկայացվել է 757 հայտ, որոնցից ԳՖԿ-ի կողմից հաստատվել է 752-ը: ԳՖԿ-ի կողմից իրականացվել է ընդհանուր առմամբ 734 հայտի ֆինանսավորում՝ 20,394.77 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

ԳՖԿ-ի միջոցով ՄՖԿ-ներին փոխանցված վարկերի մնացորդներն, ըստ բանկերի, 31.12.2011թ. դրությամբ ներկայացված են ստորև բերված աղյուսակում (որից «Ծուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրով՝ 2,376.76 հազ. ԱՄՆ դոլար, իսկ «Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման» ծրագրով՝ 7,315.9 հազ. ԱՄՆ դոլար): ԳՖԿ-ի հաշիվների մնացորդները 31.12.2011թ. դրությամբ կազմել են 3,710. 05 հազ. ԱՄՆ դոլար և 165,939.98 հազ. դրամ:

Աղյուսակ 1

ՄՖԿ կողմից փոխանցված վարկերի մնացորդների վերաբերյալ

[1] առևտրային բանկեր և վարկային կազմակերպություններ

Բանկը	*Քանակ*	*Գումար (ԱՄՆ դոլար)*	*Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)*
Հայբիզնեսբանկ	132	3 943 408.86	31.11
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	7	208 849.88	1.65
Արդշինինվեստբանկ	188	1 666 522.00	13.15
Անելիքբանկ	40	898 296.93	7.09
Յունիբանկ	27	1 181 030.11	9.32
Արցախբանկ	26	1 742 568.74	13.75
Կոնվերսբանկ	117	1 781 463.04	14.05
Ինեկոբանկ	40	1 192 445.55	9.41
Նոր Հորիզոն ՈՒՎԿ	4	5 785.68	0.05
ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ ՍՊԸ	47	32 074.16	0.25
Արեգակ ՈՒՎԿ	13	24 820.19	0.20
Առեքսիմբանկ	0	0	0
Ընդամենը	**641**	**12,677,265.14**	**100.00**
Մնացորդ շրջանառու ֆոնդ		**3,710,047.81**	**37,342,909.4 դրամ**

- Տրամադրված 734 վարկերից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է թվով 10 վարկավորման հայտ, որի արդյունքում պարզվել է, որ վարկառուների կողմից ծրագրերի համար ձեռքբերումը հիմնականում իրականացվում է առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:
- ՀՀ և ՄՖԿ-ների միջև կնքված փոխառության համաձայնագրերի 4.05 կետի համաձայն, փոխառության միջոցները ՄՖԿ-ի կողմից պետք է տրվեն ենթավարկառուներին ԳՖԿ-ից ստանալուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում՝ ենթավարկի տրամադրման վերաբերյալ ծանուցելով ԳՖԿ-ին: Եթե ՄՖԿ-ն չի կարողանում միջոցները տրամադրել վերոգրյալ ժամկետում կամ չի ներկայացնում ենթավարկի տրամադրման վերաբերյալ վճարման հանձնարարականը ԳՖԿ-ին, ապա ՄՖԿ-ն ԳՖԿ-ին պետք է տուգանք վճարի յուրաքանչյուր ուշացված օրվա դիմաց՝ փոխառության գումարի 0.05%-ի չափով: Սույն պայմանագրի իմաստով ենթավարկառուին ենթավարկի գումարը համարվում է չտրամադրված նաև այն դեպքում, եթե ենթավարկառուի կամ վերջինիս փոխկապակցված անձանց տվյալ բանկում ունեցած որևէ բանկային հաշվում (ավանդային, դեպոզիտային, թղթակցային և այլն) 15 օր շարունակ մնում են սույն համաձայնագրի շրջանակներում տրված միջոցները: Փոխառության *համաձայնագրերի* 5.02 կետի համաձայն, այն դեպքում, եթե ենթավարկառուն սահմանված ժամանակացույցից շուտ է կատարում հիմնական գումարի վճարումները, ապա ՄՖԿ-ն պարտավոր է այդ մասին անմիջապես ծանուցել

ԳՖԿ-ին և վաղաժամկետ վճարված գումարը երեք բանկային օրվա ընթացքում փոխանցել ԳՖԿ-ին: Իսկ փոխառության համաձայնագրերի 5.09 կետի համաձայն, եթե ՄՖԿ-ն տոկոսի կամ հիմնական գումարի վճարումը չի կատարում համաձայն սահմանված ժամանակացույցի, ՄՖԿ-ն պարտավորվում է ԳՖԿ-ին վճարել տույժ յուրաքանչյուր կետանցված օրվա դիմաց՝ կետանցված գումարի 0.05%-ի չափով:

ՄՖԿ-ներից պահանջվել է տեղեկատվություն՝ վարկառուներին գումարների տրամադրման, վաղաժամկետ մարումների, տոկոսների և հիմնական գումարների վճարումների վերաբերյալ: Երեք բանկերից (Արցախբանկ, Ինեկոբանկ, Առէքսիմբանկ) ստացված տեղեկատվության համաձայն, ընդհանուր 66 վարկառուների մասով ***ՄՖԿ-ների կողմից վարկառուներին գումարների ուշ տրամադրման, վաղաժամկետ մարումների, տոկոսի և հիմնական գումարների վճարումների սահմանված ժամանակացույցերը խախտելու համար տույժերը կազմում են ընդամենը 5,491.4 ԱՄՆ դոլար:***

Հիմք ընդունելով նշված կետերի դրույթները՝ անհրաժեշտ է բոլոր ՄՖԿ-ներից ստացվելիք տեղեկատվության հիման վրա հաշվարկել և գանձել համապատասխան տույժերը:

4. <u>«Ներդրումներ»</u>

Այս կատեգորիայի շրջանակներում աշխատանքներն իրականացվում են «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից: 01.01.2012թ.-ի դրությամբ Հիմնադրամի կողմից կատարվել է 1,483.98 մլն դրամի ծախս՝ IFAD-ի վարկային և դրամաշնորհային, ինչպես նաև դանիական դրամաշնորհային միջոցների (ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման գումարները) հաշվին: Սովորական բաժնետոմսերի գնման և փոխառությունների տրամադրման տեսքով ներդրումները 01.01.2012թ. դրությամբ կազմում են 1,063.0 մլն դրամ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հիմնադրամի կողմից իրականացված ներդրումները 01.01.2012թ. դրությամբ

Ընկերությունը	*գումարը (հազ. դրամ)*	*Ներդրման ձևը*	*Ձեռքբերված բաժնետոմսերի տոկոսը*
1.«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ[2]	30,000.0	ստորադաս փոխառություն	
«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	50,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	27.51%

[2] «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ին փոխառություն տրամադրվել է 40.0 մլն դրամի չափով, որից մինչև բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրի ստորագրումը մարվել է 10.0մլն դրամը:

Ընկերությունը	*գումարը (հազ. դրամ)*	*Ներդրման ձևը*	*Ձեռքբերված բաժնետոմսերի տոկոսը*
2.«Չիզ Թաուն» ՓԲԸ	48,000.0	ստորագրաս փոխառություն	
«Չիզ Թաուն» ՓԲԸ	115,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	33.26%
3.«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ	200,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	29.55%
4.«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ	200,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	27.01%
5.«Ագրոլոգ» ՓԲԸ	20,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	41.86%
6.«365 գրուպ» ՓԲԸ	200,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	33.51%
7.«Հարպրոդ» ՓԲԸ	200,000.0	սովորական բաժնետոմսերի գնում	28.91%
ԸՆԴԱՄԵՆԸ	*1,063,000.0*		

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ՝

- Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով կողմերը երաշխավորել են, որ ընկերությունները կապահովեն մի շարք նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշներ, որի արդյունքում պետք է առաջանար համապատասխան շահութաբաժին, որն, ըստ էության, պետք է ավելի մեծ լինի նվազագույն շահութաբաժնի (եկամտի) գումարից: Սակայն, ընկերությունները չեն ապահովել իրենց և Հիմնադրամի երաշխավորած ցուցանիշները, այսինքն՝ Հիմնադրամը շահութաբաժնի տեսքով ստանում է երաշխավորված շահույթի հաշվարկված և նվազագույն շահութաբաժնի տարբերության չափով պակաս շահութաբաժին (եկամուտ), ինչը պետք է բացառվի, հակառակ պարագայում, խախտվում է ներդրում կատարելու (շահույթ ստանալու) տրամաբանությունը:

Համապատասխան երաշխավորված ցուցանիշների խախտման պարագայում կստացվի, որ ներդրման փոխարեն կատարվել է տարեկան 15% տոկոսադրույքով վարկավորում կամ ձեռք են բերվել տարեկան 15% տոկոսադրույքով արտոնյալ բաժնետոմսեր:

- «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն 2012թ. հունվարի 15-ին պետք է վճարեր 2010թ.-ի համար նվազագույն շահութաբաժինը՝ 30.0 մլն դրամ, սակայն 2012թ. մարտի 1-ի դրությամբ ընկերության կողմից չի կատարվել վերը նշված պարտավորությունը: Պայմանագրով ընկերությունը պարտավոր է վճարել տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով *(2012թ. մարտի*

1-ի դրությամբ ենթակա է վճարման շահութաբաժնի գումարը՝ առնվազն 30.0 մլն դրամ և տույժ՝ 1,350.0 հազ դրամ):

• Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով հստակ սահմանված են Հիմնադրամի կողմից ներդրվող գումարների ուղղությունները, սակայն Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվությունից պարզ դարձավ, որ «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն և «Ֆյունիկ» ՓԲԸ-ն կատարել են այլ ծախսեր՝ խախտելով պայմանագրի համապատասխան պահանջը (օրինակ՝ «Ֆյունիկ» ՓԲԸ-ի պայմանագրով նախատեսված ճտի տեղափոխման հատուկ բեռնատար ավտոմեքենայի փոխարեն ընկերությունը ձեռք է բերել կերակրման սարք-համալիր):

• «Չիզ Թաուն» ՓԲԸ-ն, փոխառության պայմանագրի համաձայն, 2012թ. հունվարի 15-ին պետք է կատարեր 3,500.0 հազ դրամ փոխառության մարում և 3,124.6 հազ դրամ տոկոսագումարի վճարում, ինչը 01.03.2012թ.-ի դրությամբ չի կատարել, հետևաբար՝ ***վերջինիս նկատմամբ պետք է կիրառվեն պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները՝ 2012թ. մարտի 1-ի դրությամբ՝ 430.6 հազ. դրամ:***

• Ընկերությունները չեն ներկայացնում բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով պահանջվող հաշվապահական հաշվետվությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Թվով 20 օբյեկտների շինարարական աշխատանքների ստուգման արդյունքում արձանագրվել է 53,725.2 հազ. դրամի ծավալային հավելագրում և 51,189.7 հազ. դրամի անորակ աշխատանք:
- Ստուգված օբյեկտների գերակշիռ մասում արձանագրվել են մի շարք խախտումներ՝
  - ✓ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում բացակայում է շինարարության կազմակերպման նախագիծը, նախահաշվային մասերը փորձաքննություն չեն անցել, կոնստրուկտորական գծագրերը կատարվել են թերի՝ բացակայում են կտրվածքները, հանգույցների մանրամասները,
  - ✓ խախտվել են իրավական ակտերով սահմանված մի շարք պահանջներ,
  - ✓ խողովակաշարերի վրա չեն տեղադրվել նախագծով պահանջվող պողպատե ձևավոր մասերը, հենասյուները և խողովակաշարերը ներկված են անորակ, հենասյուների վրա տեղադրվող կիսախողովակի և գազատարի միջև պարանիտե միջադիրները չեն տեղադրվել, տեխնիկական հսկողությունն իրականացվել է թերի, սահմանված կարգի խախտումներով, սահմանված

կարգով պահանջվող հեղինակային հսկողություն օբյեկտներում չի իրականացվել և այլն:

- Ծրագրի շրջանակներում իրականացված գազաֆիկացման աշխատանքների արդյունքում գազաֆիկացումից օգտվում են ընդամենը 4211 տնտեսություն կամ նախատեսվածի 23.1%-ը:
- «Առվա Երկիր» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո ԾԻԳ-ին պետք է վերադարձներ 992մ 630մմ տրամաչափի խողովակ, որը չի վերադարձրել: Չվերադարձված խողովակների արժեքը կազմում է 11,408.0 հազ. դրամ:
- 3 պայմանագրերով ձեռքբերված պոլիէթիլենային խողովակների բաշխումը ԾԻԳ-ի կողմից թերի է իրականացվել, ինչի արդյունքում 1062մ խողովակների բաշխումը (2,841.9 հազ. դրամ արժեքով) և գտնվելու վայրն անհայտ է:
- ԾԻԳ-ի և «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում կրկնակի հաշվարկվել է ԱԱՀ՝ ընդհանուր 1,437.5 հազ. դրամ արժեքով, իսկ ուշ մատակարարված ապրանքների համար պետք է կիրառվի ընդհանուր 366.6 հազ. դրամի տույժ:
- «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԾԻԳ-ին մատակարարվել է նաև 3720մ մետաղապլաստե խողովակ՝ 1,265.6 հազ. դրամ գումարով: ***ԾԻԳ-ում բացակայում է խողովակների բաշխումը***՝ պարզ չէ՝ ում են տրված և որտեղ են տեղադրված:
- ԾԻԳ-ի կողմից մրցութային առաջարկի բանկային երաշխիքը 1,000.0 հազ. դրամի չափով չի պահվել՝ «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ի կողմից մրցութային առաջարկից հրաժարվելու արդյունքում:
- Թվով 2 պայմանագրով «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ն ԾԻԳ-ին չի վերադարձրել 200մմ տրամաչափի 100մ պ/է խողովակ՝ 1,038.0 հազ. դրամ արժեքով: Մեկ այլ պայմանագրով 200մմ տրամաչափի 65մ խողովակի համար ընկերությանը հավելյալ վճարվել է 1,220.7 հազ. դրամ, որոնց գտնվելու վայրը հայտնի չէ: Անհայտ է նաև ընկերությանը տրամադրված 60մ (200մմ տրամաչափի) և 36մ (160մմ տրամաչափի) խողովակների գտնվելու վայրը՝ 856.8 հազ. դրամ արժեքով:
- «Տրանսգազշին» ՍՊԸ-ի և ԾԻԳ-ի միջև կնքված 2 պայմանագրերով առկա են տարբերություններ՝ համայնքների կողմից տրամադրած և կապալառուների կողմից փաստացի կատարողական ակտերով տեղադրած խողովակների միջև: Բացի այդ, համայնքները պարտավորվել են կապալառուներին տրամադրել անհրաժեշտ հենասյուներ, սակայն կապալառուն կատարողական ակտերով ներկայացրել է նույնատիպ խողովակների ձեռքբերում, ինչի դիմաց ԾԻԳ-ը վճարել է 931.3 հազ.

դրամ: Մեկ պայմանագրով ուշ մատակարարված ապրանքների դիմաց պետք է պահվի 590.1 հազ. դրամ, մեկ այլ պայմանագրով կապալառուին ավել է վճարվել 359.9 հազ. դրամ:

- «Պառեքս Գազ» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից ԾԻԳ-ին չի վերադարձվել 63մմ-անոց 432մ, 75մմ-անոց 320մ խողովակ՝ ընդհանուր 923.2 հազ. դրամ արժեքով, չնայած որ աշխատանքներն արդեն ավարտված են:
- «Հովարմար» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից ԾԻԳ-ին չի վերադարձվել 200մմ տրամաչափի 52մ պ/է խողովակ՝ 539.76 հազ. դրամ արժեքով:
- Տրամադրված ենթավարկերով ծրագրերի ձեռքբերումները վարկառուների կողմից իրականացվում են հիմնականում առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:
- Երեք բանկերից ստացված տեղեկատվության համաձայն, ՄՖԿ-ների կողմից վարկառուներին գումարների ուշ տրամադրման, վաղաժամկետ մարումների, տոկոսի և հիմնական գումարների վճարումների սահմանված ժամանակացույցերը խախտելու տույժերը կազմում են ընդհանուր 5491.4 ԱՄՆ դոլար:
- Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով կողմերը երաշխավորել են, որ ընկերությունները կապահովեն մի շարք նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշներ, որի արդյունքում պետք է առաջանար համապատասխան շահաբաժին, որն ըստ էության պետք է ավելի մեծ լինի նվազագույն շահաբաժնի գումարից: Սակայն ընկերությունները չեն ապահովել իրենց և Հիմնադրամի երաշխավորած ցուցանիշները, այսինքն՝ Հիմնադրամը շահութաբաժնի տեսքով ստանում է երաշխավորված շահույթի հաշվարկված և նվազագույն շահութաբաժնի տարբերության չափով պակաս շահութաբաժին (եկամուտ), ինչը պետք է բացառվի, հակառակ պարագայում խախտվում է ներդրում կատարելու (շահույթ ստանալու) տրամաբանությունը:
- «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն 2012թ. հունվարի 15-ին պետք է վճարեր 2010թ.-ի համար նվազագույն շահութաբաժինը՝ 30.0 մլն դրամ, սակայն 2012թ. մարտի 1-ի դրությամբ ընկերության կողմից չի կատարվել վերը նշված պարտավորությունը: Պայմանագրով ընկերությունը պարտավոր է վճարել տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով (2012թ. մարտի 1-ի դրությամբ ենթակա է վճարման շահութաբաժնի գումարը՝ առնվազն 30.0 մլն դրամ և տույժ՝ 1,350.0 հազ դրամ):
- Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով հստակ սահմանված են Հիմնադրամի կողմից ներդրվող գումարների ուղղությունները, սակայն, Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվությունից պարզ դարձավ, որ

«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն և «Փյունիկ» ՓԲԸ-ն կատարել են այլ ծախսեր՝ խախտելով պայմանագրի համապատասխան պահանջը:

- «Չիզ Թաուն» ՓԲԸ-ն, փոխառության պայմանագրի համաձայն, 2012թ. հունվարի 15-ին պետք է կատարեր 3,500.0 հազ դրամ փոխառության մարում և 3,124.6 հազ դրամ տոկոսագումարի վճարում, ինչը 01.03.2012թ.-ի դրությամբ չի կատարել, հետևաբար՝ վերջինիս նկատմամբ պետք է կիրառվեն պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները՝ 2012թ. մարտի 1-ի դրությամբ՝ 430.6 հազ. դրամ:
- Ընկերությունները չեն ներկայացնում բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով պահանջվող հաշվապահական հաշվետվությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

<u>ԾԻԳ-ին՝</u> Ձեռնարկել միջոցներ՝

<u>շինարարական աշխատանքների մասով՝</u>

- արձանագրված ծավալային հավելագրումները և անորակ աշխատանքները վերականգնելու ուղղությամբ (ընդհանուր՝ 104,914.9 հազ. դրամ արժեքով),
- շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ինչպես նաև՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ոլորտում իրավական ակտերի պահանջների խախտումները բացառելու ուղղությամբ,
- նախագծային առաջադրանքը մանրակրկիտ, սահմանված կարգին համապատասխան կազմելու ուղղությամբ՝ պարտադիր նշելով օգտագործվող շինարարական նյութերի տեսակը, որակը, ծագումը և այլն,
- գազաֆիկացման ծրագրեր իրականացնելիս դրանցից օգտվելու ցածր ցուցանիշի պատճառները բացահայտելու և ծրագրերի պլանավորման փուլում հետագայում դրանցից օգտվելու հնարավորությունները ճիշտ գնահատելու ուղղությամբ,

<u>ապրանքների մասով՝</u>

- շինարարական աշխատանքների ավարտից հետո չվերադարձված խողովակները կապալառուների կողմից վերադարձնելու ուղղությամբ (ընդհանուր 13,908.96 հազ. դրամ արժեքով),
- կապալառուների պայմանագրերով կրկնակի ԱԱՀ-ի հաշվառումը բացառելու ուղղությամբ,
- մատակարարներից/կապալառուներից ուշացման տույժերը գանձելու/պահելու ուղղությամբ (ընդհանուր 956.7 հազ. դրամ արժեքով),
- շինարարական աշխատանքների իրականացման համար կապալառուներին տրամադրվող խողովակների բաշխումը պատշաճ կերպով կազմակերպելու, ինչպես

նաև՝ համապատասխան խողովակների (ընդհանուր՝ 6,185.0 հազ. դրամ արժեքով) գտնվելու վայրը ճշտելու ուղղությամբ,

ենթակարկերի մասով՝

- վարկառուներին գումարների ուշ տրամադրման, վաղաժամկետ մարումների, տոկոսի և հիմնական գումարների վճարումների սահմանված ժամանակացույցերը խախտելու մասով բոլոր ՄՖԿ-ներից (ստացված տեղեկատվության հիման վրա) համապատասխան տույժերը հաշվարկելու և գանձելու ուղղությամբ (3 բանկերից ստացված տեղեկատվության մասով՝ ընդհանուր 5491.4 ԱՄՆ դոլար արժեքով),

ներդրումների մասով՝

- բաժնետոմսերի ձեռքբերման պայմանագրերով երաշխավորված ցուցանիշների ապահովման ուղղությամբ,
- «Ակվատեխավտոմատիկա» և «Չիզ Ֆաուն» ՓԲԸ-ներից արձանագրված տույժերն ու տուգանքները գանձելու ուղղությամբ (ընդհանուր 1,780.6 հազ. դրամ գումարով),
- շահառու կազմակերպությունների կողմից պայմանագրերով սահմանված ծախսային ուղղությունները պահպանելու ուղղությամբ,
- շահառու կազմակերպությունների կողմից պայմանագրերով նախատեսված հաշվապահական հաշվետվությունները ներկայացնելու ուղղությամբ:
- Հետագայում բաժնետոմսերի ձեռքբերման տեսքով ներդրումներ իրականացնելիս պայմանագրերում սահմանել առավել իրատեսական գործառնական և ֆինանսական ցուցանիշներ:

«ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի զ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:

ՀՀ Կառավարության աշխատակազմի
«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի
իրականացման գրասենյակ» ՊՀ

State Agency "Rural Areas Economic Development Programs Implementation Unit"
Staff of the Government of the Republic of Armenia

"07" մայիսի 2012 N 218/12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝
2012 թ. ապրիլի 27-ի թիվ 01/15/2268-12 գրության

Հարգելի պարոն Գևորգյան,

Կից ներկայացնում ենք ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված <ԳՏՏՁ ԾԻԳ> ՊՀ-ի ծրագրերի վերահսկողության արդյունքների և եզրակացության վերաբերյալ <ԳՏՏՁ ԾԻԳ> ՊՀ-ի մեկնաբանությունները և բացատրությունները:

Հարգանքով՝

Տնօրեն Ս. Վիրաբյան

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ԿՈՄԻՏԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՄՏՈՒ թիվ 05/5362-12
«07» 05 2012թ.

«ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԻԳ» ՊՀ
Գրանցման № 218/12
«07» 05 2012թ.

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, , Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ: Address: 4 Tigran Mets Str, 6 floor, Yerevan, RA
tel: (37410) 54-65-10
Էլ.փոստ/E-mail: info@rado.am

<ԳՏՏՁ ՄԻԳ> ՊՀ-ի մեկնաբանությունները և բացատրությունները

Վերահսկիչ պալատի կողմից կատարված եզրակացություններ	ՄԻԳ-ի մեկնաբանություններ և բացատրություններ
Թվով 20 օբյեկտների շինարարական աշխատանքների ստուգման արդյունքում արձանագրվել է 53,725.2 հազ. դրամի ծավալային հավելագրում և 51,189.7 հազ. դրամի անորակ աշխատանք:	Բոլոր շինարարական կազմակերպություններին ուղարկվել են համապատասխան գրություններ սահմանված ժամկետներում հավելագրված գումարները վերադարձնելու և թերությունները վերացնելու նպատակով:
նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում բացակայում է շինարարության կազմակերպման նախագիծը, նախահաշվային մասերը փոփոխություն չեն անցել, կոնստրուկտորական գծագրերը կատարվել են թերի՝ բացակայում են կտրվածքները, հանգույցների մանրամասները,	Նմանատիպ խնդիրները հետագայում բացառելու նպատակով ՄԻԳ-ը ներդնում է ISO 9001:2008 ստանդարտներին համապատասխան կառավարման համակարգ, որը սահմանում է աշխատանքների հսկման և վերահսկման հստակ հոսքագրեր և մեխանիզմներ:
խախտվել են իրավական ակտերով սահմանված մի շարք պահանջներ,	Նմանատիպ խնդիրները բացառելու նպատակով ՄԻԳ-ը ներդնում է ISO 9001:2008 ստանդարտներին համապատասխան կառավարման համակարգ, որը սահմանում է աշխատանքների հսկման և վերահսկման հստակ հոսքագրեր, որոնք հիմնված են համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վրա:
խողովակաշարերի վրա չեն տեղադրվել նախագծով պահանջվող պողպատե ձևավոր մասերը, հենասյուները և խողովակաշարերը ներկված են անորակ, հենասյուների վրա տեղադրվող կիսախողովակի և գազատարի միջև պարանիտե միջադիրները չեն տեղադրվել, տեխնիկական հսկողությունն իրականացվել է թերի, սահմանված կարգի խախտումներով, սահմանված կարգով պահանջվող	Բոլոր շինարարական կազմակերպություններին ուղարկվել են համապատասխան գրություններ սահմանված ժամկետներում թերությունները վերացնելու նպատակով : Ինչպես արդեն նշվեց նմանատիպ խնդիրները բացառելու նպատակով ՄԻԳ-ը ներդնում է ISO 9001:2008 ստանդարտներին համապատասխան կառավարման համակարգ:

հեղինակային հսկողություն օբյեկտներում չի իրականացվել և այլն:	
Ծրագրի շրջանակներում իրականացված գազաֆիկացման աշխատանքների արդյունքում գազաֆիկացումից օգտվում են ընդամենը 4211 տնտեսություն կամ նախատեսվածի 23.1%-ը:	ՄԻԳ-ի մոնիտորինի և գնահատման մասնագետը կատարում է հատուկ ուսումնասիրություն, որի նպատակն է վեր հանել ցածր ցուցանիշի պատճառները և ճիշտ գնահատել գազի օգտագործման արդյունավետությունը :
«Առվա Երկիր» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո ՄԻԳ-ին պետք է վերադարձներ 992մ 630մմ տրամաչափի խողովակ, որը չի վերադարձրել: Չվերադարձված խողովակների արժեքը կազմում է 11,408.0 հազ. դրամ:	Ներկայումս կատարվում է օբյեկտի ընդունում և հանձնում, որից հետո կհստակեցվի վերադարձվող խողովակների ծավալը:
3 պայմանագրերով ձեռքբերված պոլիէթիլենային խողովակների բաշխումը ՄԻԳ-ի կողմից թերի է իրականացվել, ինչի արդյունքում 1062մ խողովակների բաշխումը (2,841.9 հազ. դրամ արժեքով) և գտնվելու վայրն անհայտ է:	ՄԻԳ-ը գրություններ է ուղարկել նշված պայմանագրերի շրջանակներում աշխատանքները համակարգող նախկին աշխատակիցներին համապատասխան տեղեկատվություն ստանալու և հետագա քայլերը սահմանելու նպատակով:
ՄԻԳ-ի և «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում կրկնակի հաշվարկվել է ԱԱՀ՝ ընդհանուր 1,437.5 հազ. դրամ արժեքով, իսկ ուշ մատակարարված ապրանքների համար պետք է կիրառվի ընդհանուր 366.6 հազ. դրամի տույժ:	Համապատասխան գրություն կուղարկվի նշված կազմակերպություն տեղեկատվությունը ճշտելու նպատակով, քանի որ հստակ չէ, որ տվյալ գումարը գոյացել է ԱԱՀ-ի կրկնարկի հաշվարկի արդյունքում: Հարցը հստակեցնելուց հետո կձեռնարկվեն համապատասխան քայլեր: ՄԻԳ-ի կողմից ներդրվող կառավարման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի

	հետագայում բացառել նման խնդիրների առաջացումը:
«Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԾԻԳ-ին մատակարարվել է նաև 3720մ մետաղապլաստե խողովակ՝ 1,265.6 հազ. դրամ գումարով: ***ԾԻԳ-ում բացակայում է խողովակների բաշխումը՝*** պարզ չէ՝ ում են տրված և որտեղ են տեղադրված:	**ԾԻԳ-ը գրություններ է ուղարկել նշված պայմանագրերի շրջանակներում աշխատանքները համակարգող նախկին աշխատակիցներին համապատասխան տեղեկատվություն ստանալու և հետագա քայլերը սահմանելու նպատակով:**
ԾԻԳ-ի կողմից մրցութային առաջարկի բանկային երաշխիքը 1,000.0 հազ. դրամի չափով չի պահվել՝ «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ի կողմից մրցութային առաջարկից հրաժարվելու արդյունքում:	**Իսկապես նման խնդիր կա, սակայն ԾԻԳ-ի իրավաբանները հավաստում են, որ խնդրի վաղեմության ժամկետն անցել է և հնարավոր չէ որևէ քայլ ձեռնարկել:**
Թվով 2 պայմանագրով «Արտինժենիրինգ» ՍՊԸ-ն ԾԻԳ-ին չի վերադարձրել 200մմ տրամաչափի 100մ պ/է խողովակ՝ 1,038.0 հազ. դրամ արժեքով: Մեկ այլ պայմանագրով 200մմ տրամաչափի 65մ խողովակի համար ընկերությանը հավելյալ վճարվել է 1,220.7 հազ. դրամ, որոնց գտնվելու վայրը հայտնի չէ: Անհայտ է նաև ընկերությանը տրամադրված 60մ (200մմ տրամաչափի) և 36մ (160մմ տրամաչափի) խողովակների գտնվելու վայրը՝ 856.8 հազ. դրամ արժեքով:	**Ներկայումս աշխատանքներ են տարվում ԾԻԳ-ի կողմից: Համապատասխան գրություններ են ուղարկվել նշված կազմակերպություն խնդիրը հստակեցնելու և լուծելու նպատակով:**
«Տրանսգազշին» ՍՊԸ-ի և ԾԻԳ-ի միջև կնքված 2 պայմանագրերով առկա են տարբերություններ՝ համայնքների կողմից տրամադրած և կապալառուների կողմից փաստացի կատարողական ակտերով տեղադրած խողովակների միջև:	*Համաձայն պայմանագրի աշխատանքների սկիզբ է համարվում 21.04.2009թ., աշխատանքների տևողությունը կազմում է 300 օր, ավարտը՝ 21.02.2010թ. Կառույցի*

Բացի այդ, համայնքները պարտավորվել են կապալառուներին տրամադրել անհրաժեշտ հենասյուներ, սակայն կապալառուն կատարողական ակտերով ներկայացրել է նույնատիպ խողովակների ձեռքբերում, ինչի դիմաց ԾԻԳ-ը վճարել է 931.3 հազ. դրամ: Մեկ պայմանագրով ուշ մատակարարված ապրանքների դիմաց պետք է պահվի 590.1 հազ. դրամ, մեկ այլ պայմանագրով կապալառուին ավել է վճարվել 359.9 հազ. դրամ:	*փաստացի ավարտը տեղի է ունեցել 30.10.2009թ., այսինքն աշխատանքների սկզբից հաշված 190 օրվա ընթացքում: Կից ներկայացվում են շինարարության թույլտվությունը և աշխատանքների ավարտման վկայագրի պատճենները:* *Համապատասխան գրություն կուղարկվի տվյալ կազմակերպությանը և համայնքին՝ փոխադարձ ակտերի և համապատասխան փաստաթղթերի համաձայն խնդիրը հստակեցնելու և լուծելու նպատակով:*
«Պառեքս Գազ» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից ԾԻԳ-ին չի վերադարձվել 63մմ-անոց 432մ, 75մմ-անոց 320մ խողովակ՝ ընդհանուր 923.2 հազ. դրամ արժեքով, չնայած որ աշխատանքներն արդեն ավարտված են:	**Խողովակներն արդեն վերադարձված են:**
«Հովարմար» ՍՊԸ-ին տրամադրված խողովակներից ԾԻԳ-ին չի վերադարձվել 200մմ տրամաչափի 52մ պ/է խողովակ՝ 539.76 հազ. դրամ արժեքով:	**Ներկայումս աշխատանքներ են տարվում ԾԻԳ-ի կողմից հարցը հստակեցնելու նպատակով:**
Տրամադրված ենթավարկերով ծրագրերի ձեռքբերումները վարկառուների կողմից իրականացվում են հիմնականում առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:	**Փոխառության համաձայնագրերում և ներդրումային ուղեցույցում ծախսերը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ չկա: Նշենք, որ կատարվում է վարկերի նպատակայնության մոնիտորինգ, որի ընթացքում վեր են հանվում վարկի հետ կապված բոլոր խնդիրները:**
Երեք բանկերից ստացված տեղեկատվության համաձայն, ՄՖԿ-ների կողմից	Երեք բանկերից ստացած տեղեկության համաձայն տվյալ բանկերի

վարկառուներին գումարների ուշ տրամադրման, վաղաժամկետ մարումների, տոկոսի և հիմնական գումարների վճարումների սահմանված ժամանակացույցերը խախտելու տույժերը կազմում են ընդհանուր 5491.4 ԱՄՆ դոլար:	տույժերը կազմել են 4969,69. ԳՖԿ աշխատակիցների կողմից ուսումնասիրվել են մնացած ՄՖԿ-ներից ստացված տեղեկությունները , հաշվարկվել են տույժերը և պահանջվել վերջիններից տույժերը վճարել ամբողջությամբ:
Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով կողմերը երաշխավորել են, որ ընկերությունները կապահովեն մի շարք նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշներ, որի արդյունքում պետք է առաջանար համապատասխան շահաբաժին, որն ըստ էության պետք է ավելի մեծ լինի նվազագույն շահաբաժնի գումարից: Սակայն ընկերությունները չեն ապահովել իրենց և Հիմնադրամի երաշխավորած ցուցանիշները, այսինքն՝ Հիմնադրամը շահութաբաժնի տեսքով ստանում է երաշխավորված շահույթի հաշվարկված և նվազագույն շահութաբաժնի տարբերության չափով պակաս շահութաբաժին (եկամուտ), ինչը պետք է բացառվի, հակառակ պարագայում խախտվում է ներդրում կատարելու (շահույթ ստանալու) տրամաբանությունը:	**Համաձայն «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի կողմից 04.05.2012թ ստացված գրությանը Հիմնադրամը իր մեկնաբանությունները և բացատրությունները կներկայացնի վեր հանված խնդիրները Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի քննարկումից հետո:**
«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն 2012թ. հունվարի 15-ին պետք է վճարեր 2010թ.-ի համար նվազագույն շահութաբաժինը՝ 30.0 մլն դրամ, սակայն 2012թ. մարտի 1-ի դրությամբ ընկերության կողմից չի կատարվել վերը նշված պարտավորությունը: Պայմանագրով ընկերությունը պարտավոր է վճարել տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով (2012թ. մարտի 1-ի դրությամբ ենթակա է վճարման շահութաբաժնի գումարը՝ առնվազն 30.0 մլն դրամ և տույժ՝ 1,350.0 հազ դրամ):	

Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով հստակ սահմանված են Հիմնադրամի կողմից ներդրվող գումարների ուղղությունները, սակայն, Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվությունից պարզ դարձավ, որ «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն և «Փյունիկ» ՓԲԸ-ն կատարել են այլ ծախսեր՝ խախտելով պայմանագրի համապատասխան պահանջը:	
«Չիզ Թաուն» ՓԲԸ-ն, փոխառության պայմանագրի համաձայն, 2012թ. հունվարի 15-ին պետք է կատարեր 3,500.0 հազ դրամ փոխառության մարում և 3,124.6 հազ դրամ տոկոսագումարի վճարում, ինչը 01.03.2012թ.-ի դրությամբ չի կատարել, հետևաբար՝ վերջինիս նկատմամբ պետք է կիրառվեն պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները՝ 2012թ. մարտի 1-ի դրությամբ՝ 430.6 հազ. դրամ:	
Ընկերությունները չեն ներկայացնում բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրերով պահանջվող հաշվապահական հաշվետվությունները:	

Աշխատանքների «ըստ էության»
ավարտման վկայագիր
CERTIFICATE OF SUBSTANTIAL
COMPLETION

Ամսաթիվ 30.10.2009 թ.
Date 30.10.2009

Պայմանագիր N FMAP / LCB / CW - 2009 / 026 / Gas
Contract No FMAP / LCB / CW - 2009 / 026 / Gas

ԿԱՊԱԼԱՌՈՒ : «Տրանսգազշին» ՍՊԸ
Contractor: "Transgasshin" Ltd

Պայմանագրի անվանումը «ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի գազաֆիկացում»
Contract name: "Natural gas supply in Ashotsk village of Shirak marz"

Շինարարության սկիզբը 21.04.2009թ.
Contract start date: 21.04.2009

Շինարարության ավարտական գինը
Total value of work completed 69423780 դրամ (AMD)

Կատարված աշխատանքները և ըստ պայմանագրի մատակարարված նյութերը ենթարկվել են ստուգման և ճանաչվել են «ըստ էության» սեպտեմբերի ավարտված, (համաձայն պայմանագրի պայմանների)
«Ըստ էության» ավարտված աշխատանքների ամսաթիվը 30.10.2009թ.
Հայտնաբերման թերությունների վերացման ժամանակահատվածի սկիզբը 30.10.2009թ.

The Works performed and materials provided under this Contract have been reviewed and found to be substantially completed and in compliance with the terms of the Contract. The date of Substantial Completion is hereby established as 30.10.2009 .
Defects liability Period starts 30.10.2009
Ավարտման կամ ուղղման ենթակա աշխատանքների ցանկը կցվում է:
Սխալմամբ, որոշակի աշխատանքների թերությունների ցանկում չընդգրկվելը, ԿԱՊԱԼԱՌՈՒՆ չի ազատում ըստ պայմանագրային փաստաթղթերի աշխատանքների ամբողջ կատարման պատասխանատվությունից:
Ցանկում նշված անավարտ աշխատանքները և թերությունները ԿԱՊԱԼԱՌՈՒՆ պետք է ավարտի մինչև 12.11.2009թ.
A list of items to be completed or corrected is attached. The failure to include any items on the Defect List do not alter the responsibility of the Contractor to complete all Works in accordance with the Contract Documents.
The Contractor shall complete or correct the items shown on the Defects List by 12.11.2009.

Մ.Հովակիմյան
Կապալառու
Contractor
ստորագրություն
Signature
30.10.09թ
ամսաթիվ
Date

Ա.Ալոյան
Գյուղապետ
Chef of community
ստորագրություն
Signature
30.10.09թ
ամսաթիվ
Date

Ռ.Նազարյան
Նախագծի գլխ. ճարտարագետ
Project Chief Engineer
ստորագրություն
Signature
30.10.09թ
ամսաթիվ
Date

Մ.Գասպարյան
«ԳՏՏԶ ԾԿԿԳ» ՊՀ նախագծման ճարտարագետ
«RAEDP AAU»SI TSS design engineer
ստորագրություն
Signature
10.09թ
ամսաթիվ
Date

Ա.Հակոբյան
«ԳՏՏԶ ԾԿԿԳ» ՊՀ շին.վերահսկման ճարտարագետ
«RAEDP AAU»SI Construction supervision engineer
ստորագրություն
Signature
2009թ
ամսաթիվ
Date

Գ.Մաթևոսյան
«ԳՏՏԶ ԾԿԿԳ» ՊՀ տնօրեն
«RAEDP AAU»SI director
ստորագրություն
Signature
10.09թ
ամսաթիվ
Date

ՁԵՎ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի գյուղապետարան
(մարզը, տեղական ինքնակառավարման մարմինը)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ No. ____

«21» 04 2009թ.

Տրված է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ՇՎԿԳ» ՊՀ-ին
ի դեմս տնօրեն՝ Գ.Մաթևոսյանի 54-28-84
(կառուցապատողի անվանումը, ազգանունը, անունը, հողամասի հասցեն)

(ամբողջ օբյեկտի շինմոնտաժային կամ վերակառուցման
«ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի գազաֆիկացում» կատարման համար
ուժեղացման, արդիականացման, վերականգնման աշխատանքները)

այդ թվում գլխավոր հատակագծի վրա նշված
(օժանդակ և ոչ հիմնական կառույցների անվանումները)

Նախագծային փաստաթղթերը մշակված են «Հայռուսգազարդ» ՓԲԸ
«Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի կողմից

Շինարարության վարման մատյանը բաղկացած է 32 էջից, կարված և դրոշմակնքված է
«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ՇՎԿԳ» ՊՀ-ի կողմից

Նախատեսվում է շինարարական աշխատանքներն իրականացնել
(նախագծային փաստաթղթերում նշված
300 օր ընթացքում
շինարարության տևողությունը)

Նախագծային լուծումները սահմանված կարգով փոփոխվել են
(լրացվում է կարգի 19-րդ կետում նշված դեպքերում)
(նախագծային աշխատանքների կապալառուի
կողմից
անվանումը, օրենքով սահմանված դեպքերում լիցենզիաների No.No.-ները)

Հատուկ պայմաններ՝

1. Կապալառուն նախքան շինարարությունն սկսելը պարտավոր է փոխհատուցել այն անձանց հանդեպ ունեցած պարտքերը, որոնց իրավունքները սահմանափակվում են շինարարության ընթացքում:

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(Իրավաբանական անձի)

FREDA
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FUND FOR RURAL ECONOMIC DEVELOPMENT IN ARMENIA

ՀՀ, ք. Երևան, Սարյան 26/3
RA,Yerevan, 26/3 Saryan Str.
Phone:(+37410) 500-581, 500-582
E-mail:info@freda.am
URL: www.freda.am

N° 01/ 50-12
«14» մայիս 20 12թ.

ՀՀ Կառավարության աշխատակազմի

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ տնօրեն

պարոն Ս. Վիրաբյանին

Հարգելի պարոն Վիրաբյան

Ի լրումն 19 մարտի 2012թ. թիվ 01/33-12 գրության հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի հատուկ կարծիքը և առարկությունները կքննարկվեն ՀԳՏՏԶՀ Հոգաբարձուների խորհրդի կայանալիք առաջիկա նիստում, իսկ վերջիններիս հետ կապված վերացման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի ՀԳՏՏԶՀ Հոգաբարձուների խորհրդի հետ քննարկման արդյունքներով:

Հարգանքով՝

Տնօրեն Տ. Խանիկյան

142
04 05 12

ՀՀ Կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
State Agency "Rural Areas Economic Development Programs Implementation Unit" Staff of the Government of the Republic of Armenia

N 41/13 «30» 01 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի կատարումն Ձեր 23.01.2013 թվականի No.02/23.16/795-13 հանձնարարականի, ներկայացնում եմ տեղեկատվություն՝ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Առդիր 5 էջ:

Հարգանքով՝

Տնօրեն Սերգեյ Վիրաբյան

ՀՀ ԿԱ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԳ» ՊՀ
Եկ. No 41/13
«30» 01 2013թ.

ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+37410) 54 65 10, ֆաքս՝ (+37410) 54 65 10 (104), էլ.փոստ՝ rado@rado.am, www.rado.am
4 Tigran Mets ave., 0010 Yerevan, Armenia, tel.: (+37410) 54 65 10, fax: (+37410) 54 65 10 (104), e-mail: rado@rado.am, www.rado.am

Վերականգնման ընթացք առ 31.12.2012թ.

Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ

(հազ. դրամ)

Հ/Հ	Արձանագրված խախտում		ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված վերականգնման ենթակա խախտումներ	Վերականգնված/Մարված		Դեռևս ենթակա է վերականգնման	Վերականգնված առ 31.12.2012	Նշումներ
	Կազմակերպություն	գումարը		գումարով	աշխատանքով			
	Հիմնանորոգում և շինարարական աշխատանքներ							
1	«Պառեքս-Գազ» ՍՊԸ	10,000.0	10,000.0	2,000.0	8,000.0	0.0	առ 31.12.12	2000.0 հազ դրամը մարվել է համաձայն <Պառեքս-Գազ> ՍՊԸ-ի հետ 15.06.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
2	«ՀՈՎԱՐՄԱՐ» ՍՊԸ	7,562.3	7,562.3	0.0	7,562.3	0.0	առ 31.12.12	Թերությունները վերացված են /հիմք. արձանագրություն առ 17.07.2012թ - ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ և Հովարմար ՍՊԸ-ի միջև/:
3	N1 «Շինվարչություն» ԲԲԸ	1,144.2	1,144.2	227.8	916.4	0.0	առ 31.12.12	227.8 հազ դրամը մարվել է համաձայն <N.1 Շինվարչություն> ԲԲԸ-ի հետ 31.08.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
4	«Սուրհամ» ՍՊԸ	32,193.4	32,193.4	0.0	0.0	32,193.4	առ 31.12.12	Սուրհամ ՍՊԸ-ի գործը գտնվում է ՀՀ գլխավոր դատախազությունում
5	«Առվա երկիր» ՍՊԸ	11,266.1	11,266.1	662.4	10,603.7	0.0	առ 31.12.12	662.4 հազ դրամը մարվել է համաձայն <Առվա Երկիր> ՍՊԸ-ի հետ 25.06.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի

6	«Գազկոմ շին» ՍՊԸ	8,105.0	8,105.0	1,295.1	6,809.9	0.0	առ 31.12.12	1295.1 հազ դրամը մարվել է համաձայն <Գազկոմշին> ՍՊԸ-ի հետ 21.05.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
7	«Ստելսշին» ՍՊԸ	3,209.7	3,209.7	633.0	2,576.7	0.0	առ 31.12.12	633.0 հազ դրամը մարվել է համաձայն <Ստելսշին> ՍՊԸ-ի հետ 16.10.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
8	«Սաղաթելյան Եղբայրներ» ՍՊԸ	4,270.5	4,270.5	0.0	4,270.5	0.0	առ 31.12.12	Թերությունները վերացված են /հիմք. արձանագրություն առ 16.08.2012թ - ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ և Սաղաթելյան Եղբայրներ ՍՊԸ-ի միջև/:
9	«Արտինժեներինգ» ՍՊԸ	5,224.0	5,224.0	0.0	5,224.0	0.0	առ 31.12.12	Թերությունները վերացված են /հիմք. արձանագրություն առ 07.12.2012թ - ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ և Արտինժեներինգ ՍՊԸ-ի միջև/:
10	«Սերբա» ՍՊԸ	8,029.3	8,029.3	0.0	0.0	8,029.3	առ 31.12.12	Սերբա ՍՊԸ-ի գործը գտնվում է ՀՀ գլխավոր դատախազությունում
11	«Սանլորետ» ՍՊԸ	2,667.6	2,667.6	797.3	1,870.3	0.0	առ 31.12.12	797.3 հազ դրամը մարվել է համաձայն <Սանլորետ> ՍՊԸ-ի հետ 16.10.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
12	«Շինարար-10» ՀՁ ՍՊԸ	2,011.0	2,011.0	0.0	2,011.0	0.0	առ 31.12.12	Թերությունները վերացված են /հիմք. արձանագրություն առ 14.07.2012թ - ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ և «Շինարար-10» ՍՊԸ-ի միջև/:
13	«Մ.Ա.Ղ. Շինանյութ» ՍՊԸ	2,616.0	2,616.0	718.3	1,897.7	0.0	առ 31.12.12	718.3 հազ դրամը մարվել է համաձայն <Մ.Ա.Ղ. Շինանյութ> ՍՊԸ-ի հետ 15.06.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի

14	«Վահե - Մանե» ՍՊԸ	3,986.5	3,986.5	0.0	3,986.5	0.0	առ 31.12.12	Թերությունները վերացված են /հիմք. արձանագրություն առ 01.08.2012թ - ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ և «Վահե-Մանե» ՍՊԸ-ի միջև/:
15	«Նառմիշ» ՍՊԸ	2,629.3	2,629.3	143.8	2,485.5	0.0	առ 31.12.12	143.8 հազ դրամը մարվել է համաձայն <Նառմիշ> ՍՊԸ-ի հետ 16.10.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
Ընդամենը 1		104,914.9	104,914.9	6,477.7	58,214.5	40,222.7		
16	Չվերադարձված խողովակների գումար, այդ թվում	13,909.0	13,909.0	2,208.0	11,701.0	0.0	31.12.12	
16ա	*«Առվա երկիր» ՍՊԸ*	*11,408.0*	*11,408.0*	*2,208.0*	*9,200.0*	*0.0*	առ 31.12.12	2208.0 հազ դրամը մարվել է համաձայն <Առվա Երկիր> ՍՊԸ-ի հետ 25.06.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
16բ	*«Արտինժեներինգ» ՍՊԸ*	*1,038.0*	*1,038.0*	*0.0*	*1,038.0*	*0.0*	առ 31.12.12	հիմք. Գրություն Արտինժեներինգ ՍՊԸ-ից տեղադրված խողովակների վերաբերյալ
16գ	*«Պառեքս-Գազ» ՍՊԸ*	*923.2*	*923.2*	*0.0*	*923.2*	*0.0*	առ 31.12.12	հիմք. Հանձնման-Ընդունման ակտ առ 22.03.2012թ
16դ	*«ՀՈՎԱՐՄԱՐ» ՍՊԸ*	*539.8*	*539.8*	*0.0*	*539.8*	*0.0*	առ 31.12.12	<Հովարմար> ՍՊԸ-ի կողմից 200մմ տրամաչափի խողովակները 52մ երկարությամբ վերադարձվել են ԳՏՏՁ ԾԻԳ ՊՀ-ին համաձայն 01.08.2012թ ակտի
17	Չհայտնաբերված խողովակների գումար, այդ թվում	6,185.0	6,185.0	0.0	6,185.0	0.0	31.12.12	
17ա	*Արշանդ ՍՊԸ, Արամիր ՍՊԸ, Վեստ Պլաստ գրուպ ՍՊԸ*	*2,841.9*	*2,841.9*	*0.0*	*2,841.9*	*0.0*	առ 31.12.12	հիմք. Գրություն Արշանդ ՍՊԸ-ից առ 19.06.2012 խողովակների հանձնման վերաբերյալ

17բ	*Վեստ Պլաստ Գրուպ ՍՊԸ*	*1,265.6*	*1,265.6*	*0.0*	*1,265.6*	*0.0*	առ 31.12.12	1265.6 հազ դրամը մարվել է համաձայն <Վեստ Պլաստ Գրուպ> ՍՊԸ-ի հետ 31.08.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
17գ	*«Արտինժեներինգ» ՍՊԸ*	*1,220.7*	*1,220.7*	*0.0*	*1,220.7*	*0.0*	առ 31.12.12	հիմք. Հանձնման-Ընդունման ակտ առ 22.10.2012թ
17դ	*«Արտինժեներինգ» ՍՊԸ*	*856.8*	*856.8*	*0.0*	*856.8*	*0.0*	առ 31.12.12	հիմք. Հանձնման-Ընդունման ակտ առ 22.10.2012թ
18	Մատակարարման կամ աշխատանքների ուշացմամբ տույժեր, այդ թվում	41,542.0	41,542.0	37,192.7	366.6	3,982.7	31.12.12	
18ա	*Վեստ Պլաստ Գրուպ ՍՊԸ*	*366.6*	*366.6*	*0.0*	*366.6*	*0.0*	առ 31.12.12	366.6 հազ դրամը մարվել է համաձայն <Վեստ Պլաստ Գրուպ> ՍՊԸ-ի հետ 31.08.2012թ-ին կնքված փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի
*18բ	*Տրանսգազշին ՍՊԸ*	*590.1*	*590.1*	*0.0*	*0.0*	*590.1*	առ 31.12.12	Ըստ փոփոխված պատվերի սահմանված ժամկետի՝ 03.10.2009թ., օբյեկտը հանձնվել է ժամկետից շուտ՝ 21.02.2010թ., Խախտում տեղի չի ունեցել
**19	Պայմանագրով նախատեսված տույժերի գումար 5,491.4 ԱՄՆ դոլար	2,042.6	2,042.6	0.0	0.0	2,042.6	առ 31.12.12	ԳԶՄՀ-ն չի թույլատրում 5491.4 ԱՄՆ դոլարի չափով տույժերի գործընթաց սկսելուն (հիմք.ԳԶՄՀ Հուշագիր, Մայիս 2012):
***20	«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ շահութաբաժնի և 1,350.0 հազ. դրամ տույժերի գումար	31,487.5	31,487.5	30,137.5	0.0	1,350.0	առ 31.12.12	«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ -ն վճարել է 2010թ. համար ՀԳՏՏԶՀ շահաբաժինը: «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ նկատմամբ Վերահսկիչ պալատի կողմից հաշվարկված տույժի վերաբերյալ ՀԳՏՏԶՀ-ն կքննարկի Հոգաբարձուների խորհրդի մոտակա նիստի ընթացքում՝ մինչև 15.09.2012թ,:

21	«Չիզ Թաուն» ՓԲԸ 3,500.0 հազ. դրամ փոխառության մարման , 3,124.6 հազ. դրամ տոկոսի և 430.6 հազ. դրամ տույժերի գումար	7,055.2	7,055.2	7,055.2	0.0	0.0	առ 31.12.12	«Չիզ Թաուն» ՓԲԸ կատարել է փոխառության պայմանագրով ստանձնած ողջ պարտավորությունը: Վերջինիս կողմից մարվել է փոխառության գումարը 48 մլն ՀՀ դրամ, հաշվարկված տոկոս, տույժ և տուգանք համապատասխանաբար՝ 5507506,85, 993 690,41 և 132492,05 ՀՀ դրամ գումարի չափով:
Ընդամենը 2		61,636.0	61,636.0	39,400.7	18,252.6	3,982.7		
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ (1+2)		166,550.9	166,550.9	45,878.4	76,467.1	44,205.4		

*18բ Թիվ FMAP/LCB/CW/-2009/026/GAS պայմանագրով ըստ վերահսկիչ պալատի հաշվետվության աշխատանքների ուշացման համար (17օր) պետք է պահվեր 590100 ՀՀ դրամ տույժի գումար: Ըստ փոփոխված պատվերի սահմանված ժամկետի՝ 03.10.2009թ., օբյեկտը հանձնվել է ժամկետից շուտ՝ 21.02.2010թ., **Խախտում տեղի չի ունեցել:**

**19 ԳԶՄՀ-ն չի թույլատրում 5491.4 ԱՄՆ դոլարի չափով տույժերի գործընթաց սկսելուն (հիմք.ԳԶՄՀ Հուշագիր, Մայիս 2012):

***20 «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ -ն վճարել է 2010թ. համար ՀԳՏՏԶՀ շահաբաժինը: «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ նկատմամբ Վերահսկիչ պալատի կողմից հաշվարկված տույժի վերաբերյալ ՀԳՏՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհուրդի որոշմամբ 1350.0 հազ դրամի չափով տույժ չկիրառել (հիմք. ՀԳԳՏԶՀ խորհրդի Արձանագրություն No23.8/139391-12 առ 28.11.2012թ.)

Ֆինանսահաշվային բաժնի պետ Ա. Սուպրիկյան

Շինարարության վերահսկման բաժնի պետ Հ. Իսպիրյան

Շինարարության վերահսկման ճարտարագետ

Նախագծման վերահսկման ճարտարագետ